

**ԱԶՆԻՎ ԱՂԶԻԿԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու
քարքառ (խոսվածք)**

Ժամանակով մի հարուստ մարդ ա ըլըմ, ունենըմ ա մի սիրուն շարմաղ ախչիկ:

Օրից մի օրը տրա ծանոթ մոլլեն դոնախ ա գալի: Պայման են կապըմ, որ աղջկանը տա, հետը տանի իրանց տուն, ուսում սըվորցընի:

Տանըմ ա: Օրեր են անց կենըմ, ամսնի, մի օր էլ մոլլի միտքը ծովըմ ա, աղջկանը խոսք ա գցըմ:

Դե ջահել ախչիկ, մոլլեն՝ քովակ, շան տեղ էլ չի դնըմ:

Տեղը որ շատ նեղըմ ա, ախչիկն ասըմ ա. — Լավ, թող քու ասածը ըլի, համա լեղացի ու ինչ ուզըմ ես, արա:

Ախչիկը էտա մոլլին դնըմ ա տաշտակի մեջը, սապունը մի լավ փրփրացնըմ ա, աչքեր ու բերան չի թողըմ, սապնակոլոլ ա անըմ, թեհնց թողըմ ա ու փախչըմ:

Մոլլեն իրեն հվաքորըմ ա, տաշտակիցը դուս ա գալի ու նստըմ ախչկա հորը նամակ ա գրըմ, թե ախչիկդ լիբբ ա, անբարոյական:

Ախչիկն էլ եղ վախտը ապրելուս ա ըլըմ մոլլի քաղքըմը, մի ուրիշի տանը՝ մենակ: Համա մոլլեն տեղն իմանալուս ա ըլըմ:

Մոլլի նամակը, որ ստանըմ ա, հոր աչքերը մթնըմ ա, էրեսը սնակնըմ, ինքն էլ նամուսի մեռած մարթ ա ըլըմ: Դե մոլլեն էլ մոտիկ մարդ՝ հըվատըմ ա, ի՞նչ տի գիդենալ, մտքըմը ի՞նչ կա:

Տղին դրգըմ ա, թե. — Գնա քրոջդ սըպանի, արնոտ շորը բեր:

Ախպերը ճամփա յա ընգնըմ, գնըմ քվորը սպանելու: Գնըմ ա հասնըմ եղ քաղաքը, որդի քիրն ա ապրըմ: Բուսուն ա պահըմ քվոր տան վրա, տենըմ ա նրա կուշտը ոչ մի մարթ չի գնըմ, իրանից սավայի իսան-միսանի շըփըլթու չկա:

Մտածըմ ա, որ «Կարող ա սուտ ըլի»: Համա հերը թամբահ ա արել, որ սըպանի, ուզըմ ա հոր պատվերը կատարի: Դուռը թխկացնըմ ա, ախչիկը բաց չի անըմ:

Հոր, մոր, իրա անունը տալուց եղը, ախչիկը դուռը բաց ա անըմ: Մըքիչ գրից են անըմ: Ախչիկն ըմանչելուց ախպորն ասըմ չի, թե սեհնց ա էլել: Մենակ, որ քշերվա կիսին ախպերը տանըմ ա մերին, որ սըպանի, շատ ըղաչանք ա անըմ, թե. «Սպանիլ մի»:

Ախպոր մեղքը գալիս ա, ինքն էլ իրա աչքովը բան չի տեհած ըլըմ, քվորը մերըմը թողըմ ա, մի ալապստրակ ա սըպանըմ, շորը արնոտ ա անըմ, գնըմ իրանց տուն, հորն ասըմ թե. —

Սըպանեցի:

Մութը ըկնակիի քշեր, աղջիկը վախըմ ա, որ գազաննին կվնասեն, բցրանըմ ա ծառի վրա:

Քշերը ըտի յա անցկացնըմ: Էքսի օրը թաքավորի տղեն իրա թիկնապահների հետ գնըմ ա մերին՝ ֆորսի: Բիրդան ջրի մեջը մի սիրուն, շարմաղ ախչկա պատկեր ա տենըմ: Գլուխը բցրացնըմ ա, տենա՝ ինչ տենա, մի հուրի մալաք, նեհնց սիրուն ա, որ արևին ասըմ ա. «Դու դուս մի գալ, ես դուս էկած եմ»:

Թագավորի տղեն ձեռաց սիրահարվըմ ա ախչկա վրա, վեր ա ունըմ տանըմ, հետը ամուսնանըմ: Օխտն օր, օխտը քշեր հրսանիք են անըմ, ուրախանըմ:

Ժամանակն անց ա կենըմ, դրանք արթեն էրկու ըրեխա են ունենըմ, համա թաքավորի տղեն կնգանը ոչ մի հարց տված չի ըլըմ, հետը խոսացած չի ըլըմ, հենց գիդենըմ ա լալ ա:

Մի իմաստուն կնիկ թաքավորի տղին ասըմ ա. — Էրկու խնձոր վեր կունես, պուճուր խնձորը կտաս մենձ ըրելիդ, մենձ խընձորը՝ պուճուրին: Ըրեխեքը ղլմաղալ կանեն, մերը կխառնվի, թեհնցով կիմանաս լիզու ունի, թե՛ լալ ա:

Թաքավորի տղեն թեկնց էլ անում ա: Ճիշտ որ իմաստուն կնգա ասածի պես, մերը խառնվում ա ըրեխանց ղլմաղալին, էրկուսի վրա էլ ջգրվում ա:

Էդ հուզրումը մարդը տապ արած տեղիցը դուս ա գալի թե. — Բա որ լիզու ունես, խի՞ չես խոսում:

— Բա խի՞ չես հարց տվել, որ խոսեի:

Դրանից եղը դրանք ավելի ուրախ ու բըխտավոր են ըլում:

Օրից մի օր էլ ախչիկն ուզում ա գնա հոր երգիքը, հարազատներին տենալու: Թաքավորի տղեն իրա հոր նաղրի հետ կնգանն ու ըրեխանցը ճամփա յա գձում: Շատ են գնում քիչ, ճամփի կիսին մի օրանա-վերանա չուրմ նազիրն ուզում ա թագուհու հետ ժամանակ անցկացնի: Թաքուհին համաձայնվում չի:

Էդ դուդուգի էկածը ասում ա. — Ըրեխիդ կմորթեմ, թե որ կամքս կատարես ոչ:

Թաքուհին թե. — Մորթում ես մորթի, նամուսն ամեն ընչից վեր ա:

Նազիրը ըրեխին մորթում ա, տենում ա դրանից եղն էլ բան դուս չեկավ, էն մնին էլ ա մորթում:

Դրանից եղը ուզում ա գոռով կամքը կատարի:

Թաքուհին ասում ա. — Թույլ տուր դուս գնամ պահանջի, գամ, ինչ ուզում ես արա, մենակ ինձ սըպանես ոչ:

Նազիրը դրա ոտիցը մի թոգ ա կապում, որ փախչի ոչ: Մըքիչ տալդա յա ընգնում թե չէ,

թաքուհին ոտիցը թոգը եղ ա անում, մի թփից կապում ու փախչում:

Նազիրը եղ ա գնում, թաքավորի տղին ասում, թե. — Վերունի կնիկ էր, ըրեխանցը սըպանեց ու ինքը փախավ:

Տղեն հվատում չի, գնում ա ման գալու:

Խոսքը տանք ախչկանը:

Ախչիկը փախչում ա, սար ու չու ա ընգնում, վերչիվերչո ընգնում ա հոր երգիքը, դառնում ա ղըզարած՝ մի հարուստ մարդի կշտի: Դա մի չոբան ա ունենում: Էդ չոբանը ուզում ա, որ ախչիկն իրա հետ ամուսնանա:

Ախչիկը չոբանին ասում ա. — Մի ոչխար մորթի, գնա մի նշան բեր, ամուսնանանք:

Չոբանը գնում ա թե չէ, ախչիկը ոչխարի թափանը գլուխն ա քաշում, դառնում քաչալ: Փախչում ա, գնում հոր տուն, ծառա յա դառնում, իրա հըմա սուս ու փուս, գլուխը կախ ըշխատում:

Քաչալին ըտի թողունք, խոսքը տանք թաքավորի տղին:

Սա շատ ա ման գալի, քիչ, հարցուփորց ա անում, կարում չի բան իմանա: Ման գալեն հասնում ա անոր երգիքը, անորանց տանը թոլ ըլում, համա գիդենում չի, որ դրանք իրա անորանք են:

Քաչալը դրան բրաուրդ ա անում թե չէ, ձեռաց ճընանչում ա, համա բան չի ասում:

Մի բիզու տանեցիք թոփ են ըլում: Ամեն մինը իրան գլխի էկածը պատում ա:

— Քաչալին ասում են. — Քաչալ մի բան էլ դու պատմի:

Քաչալը մոլլին, թագավորի նազրին, չոբանին կանչել ա տալի: Չոբանին էլ դոռան շեմքին

կընգնացնում ա ու սկսում ա պատմիլը: Իրա գլխի անցկացածը տեղին-տեղին պատմում ա: Որ մոլի մասին ա պատմում, մոլլեն ուզում ա դուս գնա, չոբանը թողում չի: Հերթը հասնում ա նազրին, սա յա ուզում դուս գնա, չոբանը թողում չի: Պատում ա, վերջացնում:

Ասում ա. — Գնամ դուս ու գամ:

Գնում ա դուս ու ախչկա շորեր հագած տուն ա մտնում թե չէ, հարազատներն ու մարթը ճնանչում են, փթաթվում, ուրխանաք՝ ինչ ուրխանում են:

Մոլլին ձիու պոչիցը կապում են ու բաց թողում: Նազրի շալակն էլ ջաղացի քար են տալի, դրզում թաքավորի երգիքը: Թաքավորը զայրանում ա, որ իրա հըվադարիմ նազրին բարցել են:

Համա որ իմանըմ ա պատճառը, վեր ա նստըմ ու հրամայըմ, որ. — Ջղացքարը մեջքիցը վեր չունեն:

Թաքավորի տղեն ու իրա կնիկը հլեդ հրսանիք են ըլըմ, բախտավորվըմ:

Նրանք հասնըմ են իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին: